ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N○____________________ « ___ » _____________ 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԿՐՈՍԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «գ» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարի մասնակցության հայտը՝ համաձայն № 3 հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

10/11/2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի _____ _____ -ի
№ _____ -Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԿՐՈՍԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2021 թվականին անցկացվող սիրողական կրոսավազքի մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) հանրապետությունում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում.

2. Խնդիրներն են՝

1) բնակչության ոչ բավարար ներգրավվածությունը վազքին, սպորտային պարապմունքներին և առողջ ապրելակերպի ոչ բավարար քարոզչությունը,

2) բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարն անցկացվում է Փարաքար-Էջմիածին մայրուղում (Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ)՝ 2021 թվականի հոկտեմբերի 30-ին:

Մեկնարկը՝

1) 1-ին տարիքային խումբ՝ Էջմիածին քաղաքի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու մերձակա տարածքից՝ ժամը 13:00-ին,

2) 2-րդ և 3-րդ տարիքային խմբերի մեկնարկը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի՝ Փարաքարի համայնքապետարանի հարակից տարածքից, ժամը՝ 13:00-ին:

Մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից երեք ժամ առաջ՝ անձը հաստատող փաստաթղթերով:

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող բոլոր քաղաքացիները, (սիրողական մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ) ովքեր չունեն առողջական խնդրիներ: Մրցաշարի ընթացքում առաջացած առողջական խնդրիների դեպքում՝ պատասխանատվությունը կրում է մասնակիցը:

7. Մրցաշարը կանցկացվի 3 տարիքային խմբով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 15-ից 17 տարեկան (2004-2006 թթ. ծնված) դպրոցականների համար 3 կմ (աղջիկներ և տղաներ)

2) 2-րդ տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան (1986-2003 թթ. ծնված) կանայք, 18-ից 40 տարեկան (1981-2003 թթ. ծնված) տղամարդիկ, 10 կմ,

3) 3-րդ տարիքային խումբ՝ 36 (1985 թ. ծնված) և բարձր տարիքի կանայք, 41 (1980 թ. ծնված) և բարձր տարիքի տղամարդիկ, 10 կմ:

8. Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

9. Մրցաշարի 3 տարիքային խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով:

1-ին տարիքային խմբի՝ 3 կմ. վազքում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցահասակ տղաները և աղջիկները պարգևատրվում են համակարգիչներով:

2-րդ և 3-րդ տարիքային խմբերում՝ (տղամարդիկ և կանայք) 10 կմ վազքում 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցները պարգևատրվում են դրամական մրցանակներով:

10. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում են համարներ և հավաստագրեր: Դրամական մրցանակներով կպարգևատրվեն ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնակիցները: ՀՀ քաղաքացի չհանդիսացող մասնակիցները կարող են մասնակցել հաշվարկից դուրս և ստանալ միայն մասնակցության վերաբերյալ հավաստագրեր: Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ

11. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցումների անցկացման համար, մրցավարներին և կամավորներին սննդի գումար և ճանապարհածախս, մարզահագուստ

(մարզաշապիկ, գլխարկ) մրցավարներին, մարզաշապիկ մասնակիցներին, գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, 1-ին տարիքային խմբի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցահասակ տղաներին և աղջիկներին համակարգիչներ, դրամական մրցանակներ 2-րդ և 3-րդ տարիքային խմբերի՝ 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 6-10-րդ տեղերը՝ 75.000 ՀՀ դրամ, 11-20-րդ տեղերը՝ 50.000 ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին և կազմակերպչական և այլ ծախսերը կատարվում է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

VII. ՀԱՅՏԵՐԸ

12. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և մրցաշարին մասնակցելու համար առողջության վերաբերյալ տեղեկանքի պատճենները: Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2021 թվականի հոկտեմբերի 26-ը ներառյալ (էլ. հասցե՝ s.prazyan57@gmail.com): Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (010) 59-96-33, (010) 59-96-32, (094) 80-09-77, երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00:

Հավելված № 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի _____ _____ -ի
№ _____ -Ա/2 հրամանի

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարի հայտի օրինակելի ձև

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագիրի, սոց. քարտի համարը	Բնակության վայրը, հասցեն	Հեռախոսի համար
1.					
2.					
3.					